



ՀԱՐԻՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒԻՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆԸ

(Կեչառիս, Սևան, Սաւանիւն, Հաղբատ և Հառիհա վանքերը)



Այր Աթոռում գեղեցիկ ավանդութիւնն է դարձել Հոգևոր Ճեմարանի տեսական տարին փակել Կաթողիկէ Ս. Էջմիածնի տոնի հաջորդ օրը: Վեհափառ Հայրապետը Հոգևոր Ճեմարանի նկատմամբ ունեցած իր հայրական վառ հոգածութեան սրտառուչ ապացուցքը տվեց այս անգամ ևս, հրահանգելով Ճեմարանի տեսչութեան, որ Ճեմարանը փակելուց առաջ տնտեսազնայցութիւն կազմակերպվի դեպի մեր պատմական վանքերը՝ Կեչառիս, Սևան, Սաւանհին, Հաղբատ, Հառիհա և այլ ուխտատեղիներ, և ապա արձակուրդ տրվի ուսանողութեան վերադառնալու տոն իրենց ծնողների մոտ, հանգստանալու և կազդուրվելու համար:

Վեհափառ Հայրապետի այս հրահանգը անսահման երախտագիտութեամբ ընդունվեց Ճեմարանի տեսչութեան, դասախոսութեան և ամբողջ ուսանողութեան կողմից:

Հունիսի 24-ն է, օրը երկուշաբթի, ամառային վառ ու պայծառ օրերից մեկը: Ճեմարանում ետուզեռ կա: Սովորական ժամից շուտ վարձնել են տւանողները և նախապատրաստվում են մեկնելու Քննութիւններից և եկեղեցական տոներից հետո այսօր նրանց առաջին ազատ օրն է: Բարձր է թողորի տրամադրութիւնը և ուրախ են ամենքը: Ճեմարանի բակում կանգնել են վանքի երկու մեծ ավտոմեքենաները, պատրաստ հեռավոր ճանապարհորդութիւնների: Մեր խոսքը բաղկացած է 50 հոգուց:

Հնչում է մեկնումի ժամը: Մտնում ենք եկեղեցի արթնելու. «Տէր, ուղղեա պղնայս մեր ի ճանապարհս խաղաղութեան, Տէր, ուղղեա և առաջնորդեա» մեզ բողոքիս: Բարձր և ուրախ տրամադրութեամբ բարձրանում ենք մեքենաները: Ժամը 7-ն է, կր մեր մեքենաները թողնում են Ս. Էջմիածինը, հարազատ Մայր Աթոռը և ուղղվում են դեպի Երևան: Խաղաղ ու զով առավոտ է: Մեքենայում սկսվում է «առավոտյան ժամերգութիւնը»-ը և ապա մինչև Երևան հնչում է երգը ուրախ և զվարթ: Երևանում մեզ միանում է դասախոսների ամբողջ խումբը: Ժամը 8-ին սիրուն Երևանը թողնելով մեր ետին տղվում ենք դեպի Մաղկաձոր... Հայրենի բնաշխարհի գեղեցկութեան սկզբում է Կոտայքից: Երևանից դուրս գարուց հետո մեր առջև բացվում է հայրենի բնութեան սքանչելի տեսարանը: Ամեն կողմ ծառ ու ծաղիկ, կանաչ ու թարմութիւն: Լիաթոք շնչում ենք ծաղիկների և մրգերի թուլրերով հագեցած օդը, մինչ մեքենայի առաջ քակվում է ասֆալտապատ ճանապարհի սև ժապավենը:

Մաղկաձորը փոխվում է շրջանային կենտրոն հանդիսացող քաղաքատիպ գեղեցիկ ու սիրուն Ախտա ավանից 8 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք, իսկ Երևանից՝ 37 կիլոմետր հեռավորութեան վրա: Մաղկաձորը տեղավորված է Մաղկաձոնյաց լեռների արևմրտահայաց զանգի մի փոքր հարթակի վրա, ձորակի եզրին, շրջապատված անտառապատ լեռներով և ծաղկալիտ հովիտներով:

ու սարահարթերով: Մաղկածոր դյուլը մեր հին մատենագրութեան մեջ կոչվել է Կեչառու, որի անունով էլ վանքը կոչվել է Կեչառիս, «մենաստան հոյակապ, մի ի պանծալի դաստակերտաց Պահլատենեաց»: Մաղկածորը Վարածնունի իշխանների սեփականութիւնն է եղել և միջին դարերից կոչվել է նաև Մաղկունիք կամ Մաղկունյաց գավառ, որի հետևանքով էլ հետագայում Կեչառիսը կոչվել է Գարաշիշակ — Մաղկածոր:

Բագրատունիների օրով, ժ դարի երկրորդ կեսին, այս գավառը անցնում է Պահլավունիներին, և Կեչառիսի վանքը ժԲ—ժԳ դարերին դառնում է Հայաստանի ամենախոշոր և ազդեցիկ վանքերից մեկը: Նա ունեցել է իր հոգևոր դպրոցը, ուր սովորել են ժամանակի նշանավոր վարդապետները և նրանց թվում մանավանդ 13-րդ դարի մեր նշանավոր վարդապետներից Խաչատուր Կեչառեցին:

Մեր մեքենան Հրազդանի ափերով բարձրանում է Մաղկածոր, և անտառի եզրին, փարթամ կանաչութեան մեջ մեր աչքերի առաջ պարզվում է Կեչառիսի վանքի հուշարձանների խումբը, որն անտարակույս պատկանում է հայ ճարտարապետության անկրկնելի կոթողների թվին: Հեռավից նա խոսում է արդեն մեր սրտերին, հոգումն և հուզում մեզ: Իջնում ենք մեքենաներից և երկրաչափությամբ մոտենում այդ սրբավայրերին: Վանքի հուշարձանների խումբը բաղկացած է չորս եկեղեցիներից, մեկ գավթից և մի քանի դամբարան-մահարձաններից: Կեչառիսի վանքի գլխավոր եկեղեցին է Ս. Գրիգոր եկեղեցին, կառուցված 1003 թվականին Գրիգոր Մագիստրոսի կողմից: Գմբեթակիր մեծ դահլիճ է, ուղղանկյուն հատակագծով, սալահատակված, տանիքը պատած սաղաքարերով: Տաճարին վից արևմուտքյան կողմից գտնվում է հոյակապ գավթիքը, շինված չորս արմերի վրա, կամարակապ, կմնտրոնահատակ առանցքով, երդիկով:

Այցելում ենք նաև Ս. Նշան (ժԲ դար), Ս. Գրիգոր եկեղեցու հարավային կողմում, կաթողիկե եկեղեցին՝ Ս. Նշանի հարավային կողմում. այն կառուցել է Պոռշյան Խաղբակ իշխանի որդի Վասակը՝ ժԳ դարի առաջին քառորդում: Ամեն կողմ վեհություն, խորհուրդ: Կեչառիսի վանքի չորրորդ եկեղեցին է Ս. Հարությունը, կառուցված 1220 թվականին, որը գտնվում է պերհիշյալ վանքերի խմբից դեպի արևմուտք, 200 մետր հեռավորության վրա:

Կեչառիսի վանքը հարուստ է նաև դամբարաններով և մահարձաններով: Նրախտագիտությանը և խորունկ հարգանքով լցված շրջապատում ենք մանավանդ վանքը կա-

ռուցող ճարտարապետ Վեցիկ վարդապետի նշանավոր մահարձանը: Նրա գեղեցիկ տապանաքարի վրա կարդում ենք՝ «Կեցիկ վարդապետս յազալիս յիշուշիք ի Քրիստոս աղաչմբ»:

Ավելի քան մի ժամ այստեղ ենք, ամեն մի քայլին մի գեղեցկութեան ենք հանդիպում, ամեն մի կտոր քարի վրա դրոշմվել է հայ ժողովրդի մտքի, հոգու, արտի և ձեռքերի մշտնադարձ գեղեցկությունը, որը տպավորում է մեզ, հուզում և արդար երաստագիտությամբ է լցնում մեր սրտերը դեպի մեր փառապանծ նախնիքները՝ իշխան, վարդապետ, գրիչ, քարտաշ, մշակ: Այս խոհերի մեջ նորից տաղվում ենք Ս. Գրիգոր եկեղեցին աղոթելու: Մեզ հետ է գլուպի ամբողջ բնակչությունը, Մաղկածորում հանգստացող խումբը: Եկեղեցում հուշիկ երգում են մեր սարկավազներն ու ուսանողները՝ «Նորհուրդ խորին»-ը, «Տէր, տղորմեա»-ն, «Հայր մեր»-ը: Հուզումը պատում է մեզ բոլորիս: Ընթացմանի փոխ-տեսուչ Մեսրոպ վարդապետը «Հոգաց» է արտասանում: Եվ մենք հիշում ենք ոչ միայն Գրիգոր Մագիստրոս իշխանին, Վեցիկ վարդապետին և Հովհաննես քահանային, այլ նաև տգեղություն ենք հիշատակը բոլոր նրանց, որոնց քրտինքն է թափվել այս քարերի վրա, և որոնց անունները Աստուծուն միայն հայտնի են: Դուրս ենք գալիս տաճարից: Վանքի բակում լավում է հայ տաղանդավոր արհեստավորի մրճի և քունգի շինարար ձայնը: Ինչ քանդվել է ժամանակի ավերիչ հարվածների տակ, այսօր քար առ քար, դիծ առ դիծ, կամար առ կամար վերակառուցվում է: Հայրենի կառավարությունը խոշոր միջոցներ է տրամադրել այս նշանավոր հուշարձանը վերականգնելու համար: Արդեն երկու տարի է, ինչ սկսվել և շարունակվում են վերականգնման աշխատանքները: Բակում մեկ շրջապատում են քաղմաթիվ մարդիկ: Առաջին խակ հանդիպումից մեզ զգում ենք հարազատ միջավայրում: Մարկավազները, ուսանողները շրջանակ կազմած՝ սիրով պատասխանում են բոլոր հարցերին: Նկարվում ենք բազմաթիվ անգամներ: Մաղկածորի սառը և առողջարար ջուրը կարտոտվ խմելուց հետո հրաժեշտ ենք առնում վանքից, Մաղկածորից և Հրազդանի ափերով տաղվում դեպի Կապույտ Սևան:

Սևա՛ն... Ժամը 11-ն է: Մեքենայի ամբողջ թափով, ասֆալտապատ ճանապարհով սուրում ենք դեպի Սևան, իսկ մեր միտքը սավառնում է հայ ժողովրդի պատմության միջով:

Հայկական բարձրավանդակի լեռներում եղած բազմաթիվ յճերի մեջ իր մեծությունը,

գեղեցիկությամբ առաջին տեղն է գրավում Սեանը, անցյալում Գեղամա լիճ կամ Գեղարքունյաց ծով: Սեանը աշխարհի լեռնային մեծ և բարձր լճերից մեկն է: Նրա բարձրությունը ծովի մակերևույթից 1916 մետր է, մակերեսը հավասար է 1416 քառակուսի կիլոմետրի, իսկ լճի ավազանն ունի 4760 քառակուսի կիլոմետր տարածություն: Սեանա լճի ավազանն ունի հոսանքուն ձև: Դեպի ավազան իջնող լեռնաշղթաների լանջերը ծածկված են զմրուխտ արոտավայրերով: Սեանա լճի մեջ են թափվում մոտ 29 գետ ու վտակ: Լճից դուրս է գալիս միայն Հրազդանը կամ Զանգուն:

«Քարի և գեղեցիկ է ծով ի խաղաղ ժամանակ», — ասել է Բարսեղ Կեսադրացին, մանավանդ մեր շքնաղ Սեանը, ամռան, երբ «հանդարտացեալ կայցէ յալեաց և ի մրրկաց»: Հիացած նայում ես ճրնդ ծիծաղել ջուրց նորա, որ յազգի ազգի գույնս ցուցանեն գերին երփն նարոտուց, մերթ ծիրանույ, մերթ կապուտակի»: Ահա այսպիսի էր արդարև Սեանը մեր ուխտի օրը: Գեղամա, Արեգունի, Սեանա, Վարդենիսի, Զանգեզուրի լեռները խոր խաղաղությամբ և ջերմագին սիրով իրենց գրկում առած օրորում են Սեվանը և կղզին, «իր դուլզ վանքերի տարույնն հուլիչ սրբության մեջ»:

Մեր մեքենան կանգ է առնում կղզու ստորոտում, հանգստյան տան դարբասի առաջ, որի թևերը բացվում են հյուսիսկարծին: Այստեղ ևս մեզ շրջապատում են խանդավաղատանքով: Դեպի վանք մեր ճանապարհի վրա մեկ է միանում այստեղ հանդատագողների խումբը: Բարձրանում ենք վզուտ փոքր դառիվերը և կանգ ենք առնում հարավ-արևմտյան փոքր սարալանջի վրա: Մեր տղերքի տակ է Սեանը, փռած իր մաքուր հայելին: Շրջանակ կազմած, կանգնել նայում ենք վար, մինչև առաջին դասարանի ուսանող Լուսյար Պալյանը, խորունկ ապրումով ու ներշնչումով, արտասանում է Ճեմարանի փոխ-տեսուչ Մեսրոպ վարդապետի (Փայլակ Միածան) «Սեանը» գեղեցիկ բանաստեղծությունը, որի պատկերները, միտքը, ներշնչումը և գաղափարական բովանդակությունը ապավորում են մեզ, հույզում:

«Ուր էլ որ լինի Սեանը խոնու ու կապուտաչի, Մեր վեճ լեռների սուր սկիհի մեջ քե ընջ քաժակում, Ոգի կը տա մեզ, կը տա մեզ սուր քաջ և կը տա գիհի, Ու հայ տանհուն լինի պատարագ և հայոց երկում խնդրյուն լինի»:

Ապա խմբով ուղղվում ենք դեպի վանք: Պատմական ու նվիրական արահետով անցնում և մտնում ենք Ս. Կարապետի եկեղեցին,

որը կառուցել է Սյունյաց Տիկին Մարիամը 874 թվականին: Առաքելոց եկեղեցին էլ կառուցվել է 874 թվականին նույն իշխանուհու կողմից: Սեանի վանքերն ևս եղել են մեր հոգևոր մշակույթի վառ ու հարուստ օջախ, ուր սովորել ու ստեղծագործել են մեր հավատավոր ու սրբակենցաղ հոգևորականներից շատերը, որոնցից ոմանք բարձրացել են նաև Հայրապետական Գահի վրա: Սեանի վանքի ամուրը սերտորեն կապված է նաև մեր ժողովրդի պատագրական պայքարի պատմության հետ: Սեանի ճակատամարտում 922 թվականին Աշոտ Բ Երկաթը, վանքում ապաստանած իր մի խումբ քաջերի հետ, հարձակվեց արաբ Բեշեր օստիկանի հրոսակների վրա և նրանց փախցրեց մինչև Դվին:

Կրոնարույր ու հայրենաշունչ այսպիսի դրվագների վերհիշումով մտնում ենք եկեղեցի: Փոքր, սիրուն մի մատուռ է Ս. Կարապետի եկեղեցին, փոքր կղզու փոքր արթթատեղին: Այստեղ ևս կատարվում է հուլիչ ու տպավորիչ ժամերգություն, որին ներկա են ուսանիկ: Ճեմարանակաները երգում են Սեանի ճակատամարտի առթիվ գրված «Ձի Ատուռած ընդ մեզ է» շարականը, «Նալեաց սիրով»-ը, «Տէր, ողորմեա»-ն և «Հայր մեր»-ը:

Սեանից վեր մինչև Մովսեսի ճանապարհը անցնում է լճի ափերով: Կանգ չենք առնում: Մեր մեքենան սուրում է վեր, միշտ վեր, սարն ի վեր: Սեվանուկ կա գրուլի մոտ մենք արդեն գտնվում ենք ծովի մակերևույթից 2122 մետր բարձրության վրա: Ցուրտ է, մրսում ենք: Ապա ճանապարհը օձազալար սյուույաներով իջնում է Դիլիջանի ծաղկավիտ և դալարազիղ հովիտը: Այստեղ անձրևում է առատորեն. լիաթոք շնչում ենք Դիլիջանի կանաչավետ երկնիների, սոճիների և անձրևի բուրմունքով հազեցած օդը:

Դիլիջանից լեռնա գիրովական, ճանապարհի երկու կողմերում, փռված են փարթամ կանաչների և ընդարձակ մրգաստան-

ցի, որը կառուցել է Սյունյաց Տիկին Մարիամը 874 թվականին: Առաքելոց եկեղեցին էլ կառուցվել է 874 թվականին նույն իշխանուհու կողմից: Սեանի վանքերն ևս եղել են մեր հոգևոր մշակույթի վառ ու հարուստ օջախ, ուր սովորել ու ստեղծագործել են մեր հավատավոր ու սրբակենցաղ հոգևորականներից շատերը, որոնցից ոմանք բարձրացել են նաև Հայրապետական Գահի վրա: Սեանի վանքի ամուրը սերտորեն կապված է նաև մեր ժողովրդի պատագրական պայքարի պատմության հետ: Սեանի ճակատամարտում 922 թվականին Աշոտ Բ Երկաթը, վանքում ապաստանած իր մի խումբ քաջերի հետ, հարձակվեց արաբ Բեշեր օստիկանի հրոսակների վրա և նրանց փախցրեց մինչև Դվին: Կրոնարույր ու հայրենաշունչ այսպիսի դրվագների վերհիշումով մտնում ենք եկեղեցի: Փոքր, սիրուն մի մատուռ է Ս. Կարապետի եկեղեցին, փոքր կղզու փոքր արթթատեղին: Այստեղ ևս կատարվում է հուլիչ ու տպավորիչ ժամերգություն, որին ներկա են ուսանիկ: Ճեմարանակաները երգում են Սեանի ճակատամարտի առթիվ գրված «Ձի Ատուռած ընդ մեզ է» շարականը, «Նալեաց սիրով»-ը, «Տէր, ողորմեա»-ն և «Հայր մեր»-ը: Սեանից վեր մինչև Մովսեսի ճանապարհը անցնում է լճի ափերով: Կանգ չենք առնում: Մեր մեքենան սուրում է վեր, միշտ վեր, սարն ի վեր: Սեվանուկ կա գրուլի մոտ մենք արդեն գտնվում ենք ծովի մակերևույթից 2122 մետր բարձրության վրա: Ցուրտ է, մրսում ենք: Ապա ճանապարհը օձազալար սյուույաներով իջնում է Դիլիջանի ծաղկավիտ և դալարազիղ հովիտը: Այստեղ անձրևում է առատորեն. լիաթոք շնչում ենք Դիլիջանի կանաչավետ երկնիների, սոճիների և անձրևի բուրմունքով հազեցած օդը: Դիլիջանից լեռնա գիրովական, ճանապարհի երկու կողմերում, փռված են փարթամ կանաչների և ընդարձակ մրգաստան-

ների մեջ թաղված կղմինդրե տանիքներով գյուղեր:

Որեկոյան ժամը 6-ին հասնում ենք Կիրովական, երբեմնի Ղարաքիլիսեն: Կիրովականը հիանալի դիրք ունի. դալարագեղ բլուրների լանջին, երբեմնի Գուգարաց աշխարհի Տաշիրք գավառի Բամբակաձորի մեջ, Տանձուտ, Վանաձոր և Փամբակ գետակների օղակների մեջ առնված: Հեռվից Կիրովականի վրա իշխում է Մայմեխ լեռնագագաթը:

Կիրովականը Հայաստանի երիտասարդ և գեղեցիկ երրորդ քաղաքն է, որ իր ուշագրավ դիրքով, բարեկարգ փողոցներով, զբոսայգիներով, պուրակներով և ծաղկափայտներով հմայում է մեզ: Հատկապես գեղեցիկ է քաղաքի կենտրոնական հրապարակը, որի շուրջ բարձրանում են հայկական ճարտարապետության մե և նորարվեստ քանդակներով զարդարված գեղեցիկ շենքեր: Անցյալի տիտղոս և սև քաղաքից ոչինչ չի մնացել: Կիրովականը արդիական և երիտասարդ քաղաք է, թաղված ծառերի մշտադալար կանաչի գրկի մեջ: Կիրովականը նաև զարգացած արդյունաբերական կենտրոն է, որտեղ կան բազմաթիվ գործարաններ: Բացի այդ, քաղաքը ծածկվել է միջնակարգ դպրոցների, երաժշտական, արհեստագործական ուսումնարանների, մանկապարտեզների, մանկամտպենների, պարզարանների և հիվանդանոցների խիտ ցանցով: Քաղաքում մեքենաներով ման գալուց հետո, ուղղվում ենք դեպի Կիրովականի հայոց Ս. Աստվածածին եկեղեցին: Կանգ ենք առնում եկեղեցու մեծ դարպասի առաջ: Մեքենաների շուրջ հավաքված բազմութունը մեզ դիմավորում է ժպիտներով: Ուղղվում ենք եկեղեցի, որը 80-ամյա Տ. Գևորգ սվազ քահանա Գևորգյանը և Անթիլիասի դպրեկանոսի նախկին ուսանող և այժմ նորօծ Տ. Վարդեն քահանան կատարում են Նրեկոյան ժամերգությունը: Մարկավազներն ու ճեմարանի տասնողներն ամոխջապես անցնում են դաս՝ պրակալի զլոպս, և խանդավառությամբ երգում օրվա ստեղծի համբարձին՝ «Երանելի սուրբ մանկունքն»: Եկեղեցին լցվում է հավատացյալներով, որոնք երկրտալածորեն զստում են ժամերգությունը:

Կիրովականի Ս. Աստվածածին եկեղեցին, որը շինվել է Հովհաննես Կարբեցու օրով 1831 թվականին, նախկին եկեղեցու երկրաշարժից քանդակվուց հետո, ճարտարապետական տեսակետից առանձին արժեք չի ներկայացնում:

Ժամերգությունից հետո եկեղեցու քակում հավաքված ժողովուրդը շրջապատում է մեր ուսանողությանը. նրանք բազմաթիվ

հարցեր են տալիս Վեհափառ Հայրապետի, Մայր Աթոռի և Ս. Էջմիածնի մասին: Անձրևում է: Այս եղանակին հաճախադեպ են անձրևները այստեղ: Գիշերում ենք Կիրովականում:

Հունիսի 25-ին, երեքշաբթի, վաղ առավոտյան, մեկնում ենք դեպի Սանահին, Լոռվա աշխարհը, Գուգարաց երկիրը:

Կիրովականից 3 կիլոմետր հեռավորության վրա, դեպի Շիրակի դաշտավայրը տանող խճուղուց մեքենան բաժանվում է դեպի Լոռի տանող ճանապարհը, որի հարավային մասից սկսվում է և դեպի արևելք է տարածվում Բազումի կամ Բզովուտայի լեռնաշղթան, արևմտուքից ծածկված այսպան ճոխ արոտավայրերով, իսկ արևելքից՝ թանձրախիտ անտառներով: Մինչ ձորում հոսում է լեռնային առվակը:

Մեքենան բարձրանում է միշտ վեր, մինչ ճանապարհի գոտին սեղմում է և գրկում Բազումի լեռնաշղթայի ալպյան արոտավայրերով ծածկված դալարագեղ լանջը: Մաքերի գլխին մտախուզ է, և դեռևս չկա արևը: Ամպամած է:

Առավոտյան ժամը 9-ին անցնում ենք Պուշկինյան լեռնանցքով: 2040 մետր բարձրության վրա ենք: Քիչ հետո արդեն կանգ ենք առնում պատմական այն աղբյուր-հուշարձանի առաջ, որտեղ գրված է. «ԱՅՍՏՆՂ ՊՈՒՇԿԻՆԸ 1829 ԹՎԻ ՀՈՒՆԻՍԻ 23-ՆՆ ՀԱՆԴԻՊՈՒՅՆ Է Ա. Ս. ԳՐԻԳՈՅՆՍՈՎԻ ՄԱՐՄՆԻՆ»: Հարյուր քսանութ տարի հետո, նույն ամսին և համարյա նույն օրերին մենք էլ անցնում ենք նույն լեռնանցքով: Այստեղ ևս մեր աչքերի առաջ պարզվել է հայրենի աշխարհի շնաշխարհիկ գեղեցկությունը: Ահա Լոռվա աշխարհը, Գուգարաց երկիրը, ամպերի մեջ մխրձված լեռնադաղաճներով, ընդարձակ անտառապատ հովիտներով և անդնդախոր կիրճերով: Ի տես այս բոլորի, մեր հիշողության մեջ զարթնում են պատմական այդ վայրերի հետ սերտորեն կապված քաղցր հիշատակներ:

Պուշկինյան լեռնանցքում, աղբյուր-հուշարձանի պրխին, տասը քալ հեռավորության վրա բարձրացել է սիրուն և ճաշակավոր «Գոսարք» ճաշարանը: Մտնում ենք ճաշարանից ներս: Գտնում ենք ջեյմ հյուպատի-րություն: Ամեն կողմ մտքորոշյուն և վանոնավորություն: Նախաճաշում ենք այստեղ, ու մի պահ հանգստացած, ճանապարհ ենք ընկնում դեպի Ալավերդի, Սանահին: Օձադալար ճանապարհը քակվում է սարի լանջի վրա: Իջնում ենք Զորագետի հովիտը: Ահա և գետը՝ Զորագետը: Տեղ-տեղ շատ խորն է գետի անկողինը. նա սկիզբ է առնում Լոռու հարթավայրից երկու ակունքներով, և մի

որոշ տեղ հանգիստ գալարումներով հոսելուց հետո, դուրս է գալիս Տաջրատտափի վրայից և մտնում նեղ ու զառիվայր ձորը: Անցնում ենք Ձորագետի հին կամրջով և բարձրանում Չաղին-դաղի հանդիպակաց սարավանդը, մինչ հեռվից երևում են Չաղին-դաղի լալվար, լոք և Լիջան լեռնագագաթները, և, քամպերը դանդաղ ուղտերի նման Չաղին լեռան վրա կանգ առանք: Հիշում ենք մանավանդ հայ պրականոսությունից «Լալվարը որսը»: Չաղին-դաղի խոր ձորերով է հոսում պղտոր Դեբետը: Անցնում ենք Այգեհատ, Ովղունլար (Օձուն) հայ գյուղերով և ուղղվում դեպի Ալավերդի:

Այժմյան Ալավերդու շրջանը պատմական Հայաստանի Գոգարաց նահանգի Տաշիրք Գավառի մի մասն է հանդիսանում: Ժ դարից այստեղ իշխել են Բագրատունիները: 978 թվականին այստեղ է հիմնադրվել Անիի թագավորության հնթակա Կյուրիկյան թագավորությունը: Այս շրջանում Տաշիրքը ապրել է տնտեսական, մշակութային, հոգևոր բուռն վերելք: Կառուցվել են բազմաթիվ վանքեր, աշխուժացել է արևուտը, կառուցվել են Հաղբատը, Սանահինը, Քոթայրը, Հոռոմայրը, Քառասուն մանկունքը և Կայան, Կայծոն, Ախթալա ամրոցները: ԺԳ դարից այստեղ իշխել են Ջաքարի և Խվանե կղբայրները: Իջնում ենք Դեբետի ձորը, և ահա մեր առաջն է Սանահին կայարանը: Այգեհանից մեզ ժպտում են մրգերով ծանրաբեռնված բալենիներն ու խնձորենիները, մինչ Ալավերդու պղնձածուլական գործարանները իրենց սրողպատյա թոքերից արտաշնչում են աշխատանքի ստեղծարար հնչքը:

Հետմիջօրեի ժամը 1-ին մեր մեքենաները կանգ են առնում Դեբետ գետի վրա ձրգված հին կամրջի մոտ, կամուրջ՝ որը շինվել է ԺԳ դարում Նանա թագուհու կողմից: Սանահին վանքը գտնվում է կամրջից 3 կիլոմետր հեռավորության վրա, Սանահին համանուն գրուղի սարի լանջին: Ետապում ենք ժամ առաջ հասնել վանք: Ոտով քարձրանում ենք սարն ի վեր, ուխտավորի հավատով և ջերմեռանդությամբ, ժայտու և սղորապտույտ անդ կածաններով: Ընդունում հոսում է պղտոր Դեբետը, հանդիպակաց պղնձագույն լեռներից լսվում է Ալավերդու պղնձածուլական գործարանների զվարթ աղմուկը և անընդհատ երթևեկող գնացքների պարարտ սուլոցը: Հասնում ենք Սաևախին գյուղը: Կղմինդրի կոտրվածքով ծառերի և փարթամ կանաչների մեջ թաղված երկիկների ետևից երևում է Սաևախին հուշակավոր վանքի հովանավոր սուրբ զմբեթը: Ետապեցնում ենք քայլերը, ժամ առաջ ծնրա-

դրելու և համբուրելու հազարամյա վանքի սուրբ քարերը և մեր եռամեծ վարդապետների նվիրական շիրմները: Վեհերոտ քայլերով մտնում ենք վանքի բակից ներս և հափշտակված կանգ ենք առնում այդ սրբավայրերի և շիրմների առաջ: Սարսուռ է անցնում մեր ամբողջ մարմնով: Վեհ է պահը և սուպավորիչ... դարերն են մեզ նալում:

Սանահին վանքի պոյնտյունը բարձրանում է մինչև Ժ դար: Քաղկեդոնական վեհերի պատճառով Հոնաստանում հայաժամած հայ հոգևորականները Անանիա Մոկացի կաթողիկոսի օրով այստեղ կառուցում են վանք, հիմնում միաբանություն և դրադվում գիր ու գրականությամբ, աղոթքով ու հայ մշակույթով: Սանահինը դառնում է մեր մշակույթի վառ օջախներից մեկը, Բագրատունյաց Սմրատ Բ թագավորի օրերից, այստեղ աշխատում ու ստեղծագործում են մեր եռամեծ վարդապետները, Հայ եկեղեցու մեծիմաստ և քաջակորով պաշտպանները:

Սանահին և Հաղբատ վանքերի մասին խոսել են մեր պատմիչներից Ստեփանոս վարդապետ Ասողիկը (Ժ դար), Սամվել Անեցին (ԺԲ դար), Կիրակոս Գանձակեցին և Մատթեոս Ուռհայեցին և Վարդան վարդապետ Բարձրբերդցին (ԺԾ դար):

Սանահինի վանքը միաժամանակ հանդիսացել է մեր ազգային-եկեղեցական առաջին պանթեոնը. վանքի տաճարում թե սարի լանջին կողք-կողքի պառկել են մեր պատմության, սրի և քաջության, գրի և հավատքի մեծանուն հերոսները, Ջաքարե իշխանից մինչև Գրիգոր վարդապետ Տուտուրդին:

ԺԹ դարում Սանահինը իր շրջակայքով պատկանել է Արղթիջանց Երկայնաբազուկ իշխանական տոհմին, և վերջապես ժողովրդ է հիշել, որ Սանահինում է ծնվել հայ բողոքոսի տաղանդավոր զավակ Անաստաս Միկոյանը:

Սանահինի վանքը քարեղեն ճարտարապետական մի համանվազ է՝ հուշարձանների իր խմբով, որտեղ ներդաշնակորեն օգտագործվել են հայ ճարտարապետության մինչ այդ ձևեր բերված բոլոր նվաճումները: Սանահինում գոյություն է ունեցել բազմանդամ միաբանություն, որը մեծ ազդեցություն է թողել ժամանակի հայ քաղաքական ու մշակութային կյանքի վրա: Այստեղ գործել է Գրիգոր Մագիստրոսի ճեմարանը (ԺԱ դար), և, ըստ ավանդության, այնտեղ դասավանդել է ինքը՝ Գրիգոր՝ Մագիստրոս գիտուն իշխանը: Սանահինը միաժամանակ հանդիսացել է Կյուրիկյան Բագրատունիների, Ջաքարյան սպասալարների և Երկայնաբազուկ Արղթիջանների տոհմական գերեզմանոցը:

Վանքը, բացի իր ճարտարապետական կառուցվածքի առանձնահատկություններից, ու-

նի նաև բազմաթիվ վիճական արձանագրու-
թյուններ, հուլիս կարևոր հայ պատմութեան
համար:

Սանահինի Ս. Աստվածածին եկեղեցին կա-
ռուցվել է 935—945 թվականներին Հունաս-
տանից Ռոմանոս կայսեր ժամանակ կրոնա-
կան հալածանքներից այստեղ ապաստան
գտած ուսումնատենչ հայ վարդապետների
կողմից: Եկեղեցին արտաքուստ ուղղան-
կյուն է, ներքուստ՝ խաչաձև, կամարակապ,
գմբեթազարդ: Եկեղեցու հատակը ծածկված
է սրբատաշ սալիկներով:

Սանահին վանքի ամենագլխավոր և փա-
ռաշուք ճարտարապետական կոթողն է Ամե-
նափրկիչ եկեղեցին, կառուցված 967—972
թվականներին Աշոտ Գ Ողորմած թագավորի
բարեպաշտ թագուհի Խոսրովանուշի և նրա
երկու որդիների՝ Սմբատ և Գուրգեն իշխան-
ների կողմից, և որոնց բարձրաքանդակները
նկարված են եկեղեցու արևելյան պատի
ճակատին: Տաճարը սյուններ չունի, ներքուստ
խաչաձև, գմբեթազարդ, ունի կրկնահարկ
խորաններ չորս անկյուններում, ինը պա-
տարագամատույց սեղաններ: Խորանի մուտ-
քի պատի մեջ գտնվում է գաղտնարանը, ուր
պահվել են վտանգի ժամերին վանքի սրբա-
ղան անոթները, ձեռագրերն ու սրբություն-
ները:

Սույն եկեղեցու արևմտյան կողմում գտ-
նվում է Գավիթը կամ ժամատունը, կառույ-
ված 1181 թվականին Սանահին վանքի ա-
ռաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսի կող-
մից: Գավիթը մի ընդարձակ սրահ է, գմբե-
թազարդ, երդիկով, հաստատված չորս հաս-
տարեստ միակուսր սյուների կամարագոտու
վրա: Սյուների խարիժներն ու խոյակները
քանդակազարդված են հրաշալիորեն: Գավ-
թում կան բազմաթիվ վիճական արձանա-
գրություններ. հատակը ծածկված է վանքի
երախտաշատ և մեծանուն առաջնորդների
տապանաքարերով:

Նորագավիթը ընդարձակ կամարակապ մի
սիրուն սրահ է, շինված կամ կառուցված
միատեսակ սրբատաշ քարերից 1211 թվա-
կանին, Ջաքարի սպասալարի հազարապետ
Վաչե Սարգսյան իշխանի կողմից: Այստեղ
են գտնվում իշխանների բազմաթիվ դամ-
բանաքարեր:

Սանահին վանքի հուշարձանների մեջ ա-
մենահետաքրքիր կառույցներից մեկն է Մա-
գիստրոսի ճեմարանը, նախագավթի հյուսի-
սային կողմում, Ամենափրկիչ և Ս. Աստվա-
ծածին եկեղեցիների միջև: Մագիստրոսի ճե-
մարանը կամարակապ մի գողտրիկ կառույց
է, ժԱ դարից: Նա եղել է Սանահին վանքի
դպրանոցը:

Ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային
պատին կից բարձրանում է գեղեցիկ դան-
գակատունը, որը քարեղեն մի սլացք է, թուխք
դեպի երկինք, իր խոյանքի մեջ քարացած:
Կառուցված է ԺԳ դարում Արաս Բ Բագրա-
տունի թագավորի օրոք: Գողտրիկ կաթողի-
կեով եռահարկ մի կառույց է դա, ներքուստ
քարե սանդուղքներով: Երկրորդ հարկում
կան պատարագի երկու սեղաններ: Սանա-
հին վանքի պատմական հուշարձանների մաս
է կազմում նաև Ս. Գրիգոր Բարձրաբաշ եկե-
ղեցին: Սա մի փոքր և սիրուն մատուռ է,
գմբեթակիր, արտաքուստ կլոր, իսկ ներքուստ
խաչաձև, կառուցված հավանաբար Ժ դարում:

Վանքի ամենահետաքրքիր և արժեքավոր
կառույցներից մեկն է հանդիսանում Մառե-
նադարանը, կառուցված 1063 թվականին Դա-
վիթ Ա Անհողին թագավորի դուստր Հրանուշ
թագուհու կողմից: Մատենադարանը գտնու-
վում է Ս. Գրիգոր եկեղեցու հյուսիսակողմը
Շենքի մուտքի կամարի և ճակտի մեծ քար
վրա կան բազմաթիվ արձանագրություններ:
Մտնուցում է հիշատակվել են նվիրատուների
անունները: Գրատուն-մատենադարանը ի-
ճարտարապետական առանձնահատկությամ
ու շմիայն նորություն է, այլ նաև հոյակա
մի կոթող: Մատենադարանը առանց սյունի
և կամարակապ, քառակուսի հատակադոն,
Գմբեթի թմբուկը հաստատվել է կամարներ
վրա, որոնք վեր են բռնվել չորս գեղաքան
դակ կիսասյուներով: Որմերում կան բազ-
մաթիվ խորշեր հավասար խորությամբ, ե-
կեղեցական սպասներ և ձեռագրեր պահել
համար: Որմասյուները և նրանց խարիժի
ներն ու խոյակները կրում են կողոված
նուրբ զարդաքանդակներ, թույլների և ս-
ղունների բարձրաքանդակներ: Շենքի ըն-
հանուր երկարությունն է մոտ 9 մետր, ի-
բարձրությունը՝ մոտ 11 մետր: Այս բոլոր
դիտելուց հետո, նորից վերադառնում և
Ամենափրկիչ եկեղեցին ու կանգնում երեկ
յան աղոթքի... Մեզ հետ նույն ժամին
դոթքի են կանգնել նաև մեր եռամեծ վա-
րապետների և շինարար իշխանների հոգին
րը: Հինավուրց տաճարի կամարների տա-
ուր ծնրադրել են և աղոթել մեր նախնի
հնչում է նաև մեր աղոթքը... Ուսանողնե-
րգում են ձեռք զուարթը... Եվ լույս է
նում մեր հոգիների մեջ, լույս է իջնում ա-
տեղ թաղված սուրբ վարդապետների և ս-
վանքը շինող ու շենցնող իշխանների շիր-
ների վրա... Եկեղեցու գմբեթից վեր, դե-
վեր, երկինք է բարձրանում մի անգամ
հայ աղոթքը: Պահը հուլիս է և աննկարագ
լի: ... Երկյուղածորեն համբուրելուց հե-
Ս. Սեղանը, ուղղվում ենք դեպի արքայակ

և վարդապետական դամբարանները, վանքի հարավ-արևմտյան մասում: Կանգնում ենք մի պահ: Զաքարև և Իվանն սպասարանների և հայ իշխանների դամբարանների առաջ, ու ապա խմբովին ուղղվում դեպի հռամեծ վարդապետի, Սանահին վանքի հուշակավոր առաջնորդի և մեծիմաստ աստվածաբանի՝ Գրիգոր Տուտեորդու մահարձանը: Ինքնաբերարար և ներքին մղումով բոլորս մեկ մարդու նման ծնրադրում ենք նրա շիրմի առաջ: Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետը հուզված ու թրթռուն ձայնով «Հուզուց» է արտասանում. արցունք և կրախտագիտություն կա նրա աղոթքի մեջ: Ամեն ինչ լուռ է մեր շուրջը, ու մենք մեր հոգեղեն աչքերով տեսնում ենք ահա մեծ Տուտեորդուն այս նույն տեղերում շրջապատված իր Սանահինյան աշակերտներով, կրք նրանց տալիս էր կրակի իր պատգամը, որ պատգամն է նաև տրված մեզ, և դալիք բոլոր սերունդներին. «Հաւան եմք մեք ընդ հարսն մեր ի դժոխս իջանել և ոչ ընդ հոռոմոց յերկիրս ելանել»: Համբուրում ենք շիրմը ու մեր ուխտը կատարած, ոտքի կանգնում: Գեղեցիկ է Տուտեորդու մահարձանը, բարձր, սյունազարդ և կամարակապ, վրան քանդակազարդ շքեղ խաչքարով և արձանագրությամբ:

Սանահինի վանքը հուշարձանների, մատուռների մի սուրբ աշխարհ է, ո՞ր մեկը հիշել, ո՞ր մեկի առաջ ծնրադրել... Մոտ երեք ժամ ենք անցկացնում այս սրբավայրում և մեզ թվում է, որ դեռ ոչինչ չենք տեսել. ժամերը սահել են բոպենների նման արագ և անվերադարձ:

Հայրենի կառավարությունը սեփական միջոցներով խոշոր վերանորոգչական աշխատանքներ է կատարել նաև Սանահինի վանքում:

Հավաքվում ենք Սանահինի կամարակապ աղբյուրի մոտ, աղբյուր, որ կառուցվել է Զաքարև և Իվանն եղբայրների կողմից: Աղբյուրն էլ ճարտարապետական մի սիրուն կոթող է. նրա ճարտարապետն է ոմն Մխիթար: Ստուներակ ջուրը հավաքվում է ստորերկրյա խոր ու ընդարձակ յոթը ավազանների մեջ և Չաղին-դաղից կավե թրծված խողովակների միջով հասնում է մինչև վանք:

Մեկնման ախուր ժամն է: Պետք է հրաժեշտ առնել այս սրբավայրերից: Վանքի բակում կանգնած, մի անգամ ևս մեր աչքերով գրկում ենք վանքը, նրա հուշարձանների ամբողջ խումբը, և նրա պատկերը մեր սրտում ու հոգում որպես թանկագին մասունք՝ սարերի ու ձորերի միջով ուղղվում ենք մյուս բարձունքը, որտեղ անհամբեր մեզ է սպասում Հաղբատը:

Ժամը 5-ն է: Ոչ ոք սովածություն չի զգում: «Ոչ միայն հացիս կեցցէ մարդ...»: Իսկ այսօր մենք Սանահինում շատ մեծ հոգեկան սնունդ և լույս ենք քաղել մեր ուխտից:

Ուղղվում ենք դեպի Հաղբատ, համլտտի և դեպտոթյան այդ կրկրորդ օջախը՝ «Յուխտ» և յերկրպագութիւն»: Հաղբատի ճանապարհը ավելի դժվար է, թեք ու ցից: Բայց կրակ կա մեր սրտում, տեսնելու նաև մեր հոռամեծ վարդապետների այս հոգևոր ու իմացական Տունը: Մագլցում ենք ժայռերն ի վեր, երբեմն հետս ընկրկում, բայց միշտ առաջանում ենք, հաղթահարելով դժվարությունները, արովհետև մեր սուրբ նպատակը սովորություն չի ճանաչում: Հեռվից Հաղբատը քաշում, ձգում է մեզ իրեն: Նա ուրախ է: Ամեն մի քայլին մեր աչքերի առաջ միշտ պարզվում են նորանոր գեղեցկություններ: Հեռվում կոռու հեքիաթային լեռներն են, իսկ ձորում, խոր կիրճի միջով հոսում է պղտոր Գեբետը: Ոտով Սանահինից Հաղբատ 8 կիլոմետր ճանապարհ կտրելուց հետո հասնում ենք դուղ: Այս մտերիմ ճանապարհով անցել են նաև մեր վարդապետները: Հեռվից մտերմորեն մեզ է նայում և ժպտում Սանահինը... որ այցելում ենք իր եղբոր:

Հաղբատ ու Սանահին, երկու համբուրելի անուններ, մեր հոգևոր մշակույթի ու հավատի վառ օջախներ: Երկյուղածությամբ ու հիացմունքով համակված, մտնում ենք դարավոր մեծաստանի պարիսպներից ներս: Նույն սիրելի և միստիկ միջավայրը, նույն համբուրելի պատմական անունները, նույն ջերմ ու կենդանացնող շունչը ամեն կողմ... Հարազատ է մեզ նաև Հաղբատը: Նա խոսում է մեր զգացմունքներին, մեր հոգուն...: Հաղբատի վանքը հիմնադրվել է Աբաս Ա Բագրատունու օրոք, Հունաստանից հալածական հայ վանականների կողմից:

Հաղբատի գլխավոր եկեղեցին է Ս. Նշաւը, ճարտարապետական հուշակապ մի կառույց: Եկեղեցին հիմնադրել է նույն բարեպաշտուհի Խոսրովանուշ թագուհին, Բագրատունյաց նախարարական տան և արքունիքի պաշտպան ու պահպան Քրիստոսի խաչափայտից մի մասունք նվիրելով եկեղեցուն: Ս. Նշանը շինվել է 967—991 թվականներին, Գուրգեն և Սմբատ արքայորդիների օրոք, որոնց բարձրաքանդակները դրնվում են տաճարի արևելյան պատի վրա, դեմ-դիմաց կանգնած, եկեղեցու կաղապարը իրենց ձեռքում բռնած: Ս. Նշանը կառուցվել է սրբատաշ քարերով, ներքոստ խաչածև է, արտաբուստ՝ քառանկյունի, առանց սյուների:

Ճարտարապետական տեսակետից հոյակապ կառույց է նաև Ս. Նշանի Գավիթը կամ Ժամատունը, որը գտնվում է արևմտյան կողմում, «զարմանակերտ» մի շինք, որ ըստ պատմիչի, «հիացուցանէ գտեսողսն»։ Այն շինել են տվել Կյուրիկե Ա-ի Մարիամ և Ռուսադան արքայադուստրերը, 1161 թվականին։ Գավթի կենտրոնում կա ավազան, տրտեղ, ըստ ավանդության, կատարվելիս է եղել ջրօրհնները։ Գավթի հատակը ծածկված է տապանաքարերով։ Գավթը մի մեծ սրահ է, խաչաձև հատակագծով, երկու մեծ սյուների և 10 կիսասյուների խաչաձևեղ կամարների վրա կանգնած հոյակապ զմբեթով։

Ժամատան հարավում գտնվում է Ս. Գրիգոր եկեղեցին, կառուցված 1005 թվականին, ինը պատարագամատույց սեղաններով։ Իսկ հյուսիսային կողմում գտնվում է Ս. Աստվածածին մատուռը (ԺԳ դար)։

Հաղբատի կառույցներում, իր ճարտարապետական յուրահատուկ կառուցվածքով ուշադրություն է գրավում վանքի վանահայր Համազասպ եպիսկոպոսի 1257 թվականին շինած «Համազասպի շինք»-ը, մի քեղեցիկ և ընդարձակ դահլիճ, շինված սրբառատ զարդերից, շուրջ 25,50 մետր երկարությամբ, 32 մետր բարձրությամբ և 25,50 մետր լայնությամբ, ութ կիսամյուսների հետ կամարներով միացած զմբեթով։ Այս մեծ դահլիճը ծառայել է որպես Խլբատուն, որտեղ դասավանդել են մեծ հաղբատցիները։

Դպրատան հարավային կողմում գտնվում է Մատենադարանը, քառակուսի հատակագծով, առանց սյունի, ութանկյուն զմբեթով մի շինք, կենտրոնում ոսնենալով մի բացվածք, որտեղից լույս է թափանցիլ ներս։ Վանքի բակում, մենակ, բարձրանում է Զանգակատունը, կառուցված 1245 թվականին, երկհարկանի, քառակուսի հատակագծով, քանդակազարդ գույգ լուսամուտներով։ Առաջին հարկի պատի ներսում կան երկու փոքր խորաններ և քարե աստիճաններ, երկրորդ հարկ բարձրանալու համար, որտեղ կան չորս խորաններ և սյունազարդ զմբեթ։ Զանգակատան մուտքը կամարակապ է, Զանգակատան առաջ, բակում կան դամբարաններ մեծ վարդապետների՝ Դավիթ Քոթայրեցու (ԺԳ դար), Հովհաննես Սարկավազ Իմաստասերի (1229 թ.), Հովհաննես Պլուզի (ԺԴ դար) և ուրիշների։

Վանքի պարիսպներից դուրս գտնվում է Սեղանատունը, 30 մետր երկարությամբ և 9 մետր լայնքով մի շինք, շինության թվականը անհայտ, բայց հավանաբար ԺԳ դարից, երբ Հաղբատն ուներ մեծ թվով միաբանություն և հոփերականություն։

Հաղբատի վանքը շրջապատված է պարսպով (ԺԳ դար)։ Պարիսպը արևմուտքից տնի բրգաձև աշտարակներ, Գլխավոր մուտքը, արևմտյան կողմից, կամարակապ է։ Պարսպից ներս, թե՛ հյուսիսային և թե՛ հարավային պատերին կից կան միաբանական խցիկներ, ուր աղոթել և ատեղծագործել են մեծիմաստ հաղբատցիք։

Պարսպից դուրս, արևելյան կողմում է գտնվում Վանքի աղբյուրը, կառուցված 1258 թվականին, վանքի վանահայր Հովհաննես արքեպիսկոպոսի կողմից։ Սրահանման, երեք կամարակիր մուտքերով քարեղեն մի շքանաղ կոթող է։ Պատերին կից հաստատված են հինգ քարե ավազաններ, որոնց մեջ հոսում է առատորեն սառնորակ ջուրը, բերված՝ Ս. Լուսի սար լեռան ակունքներից, կավե խողովակներով։ Աղբյուրից դեպի արևելք Հաղբատի գերեզմանատուն է (հոգեվոր և աշխարհիկ) գեղակերտ խաչքարերով։

Ժամերն անցնում են աննկատ։ Հաղբատն իր շրջակայքով շատ հարուստ է պատմական հուշարձաններով և օրեր են պետք հանգամանորեն այցելելու այդ բոլորին։ Արդեն երեկո է, արևը մայր է մտել, պետք է շտապել։ Նորից մտնում ենք Ս. Նշան, ու իջնող գիշերվա հետ, կատարում մթի մեջ «Եկեսցե՛ն»-ն։ Հաղբատի դարավոր վանարների տակ հնչում է մի անգամ ևս «ի խորոց սրբտից» բխած մեր աղոթքը։ Անասելի հուզումով, համարյա բռնի բաժանվում ենք Հաղբատի սուրբ քարերի։ Իջնում ենք սարից ներքև։ Մեզ է հետևում հեռվից Հաղբատի կաթողիկեն... Գիշերում ենք Ալավերդիում և հաջորդ օրը, ամսի 26-ին, չորեքշաբթի, առավոտյան ժամը 7-ին, մերադարձի մեր ճանապարհի վրա, ուղևորվում ենք Օձուն (Ուրունյար) գյուղը, ուր կա հյուսիսերտ տաճար և մահարձան կոթող։ Գեղադիր գյուղը սարի լանջին թաղված է ծառերի և փարթամ վանաչի մեջ։

Մոտենում ենք պարսպապատ եկեղեցուն։ Օձունի եկեղեցին կառուցել է Հովհաննես Օձնեցի Իմաստասեր կաթողիկոսը 735 թվականին։ Եկեղեցին զմբեթակիր է և ունի բազիլիկ ձև, երեք կտրմերից շրջափակված կամարակապ արահներով։ Տաճարի դռների շրջանակները, պատուհանների պսակները զարդարվել են բուսաքանդակներով և սրբերի բարձրաքանդակներով։

Եկեղեցու արևելյան պատի լուսամտափ ճակատում գտնվում է Քրիստոսին ներկայացնող մի պատկերաքանդակ, ձախ ձևերում քանած Հովհաննես Ավետարանը, որի առաջին երեսի վրա գրված է միջին երկաթագրով՝ «Ի սկզբանէ էր բանն և, մյուս ե-

րեսի վրա՝ «բանն էր առ Ած. և Ած. էր բանն»: Տաճարի հյուսիսային կողմում բարձրանում է գերեզմանական մի շատ հին և բացառիկ աստիճանավոր կոթող, երեք քառանկյուն սյուններով, կամարով կապված միմյանց հետ: Հուշարձանը կառուցված է վարդափայլ սրբատաշ քարերից: Եկեղեցու շրջափակը գերեզմանատուն է, գեղաքանդակ խաչքարերով: Կես ժամ մնալուց հետո հրաժեշտ ենք առնում Օձունի եկեղեցուց և ուղղվում դեպի Հառիճա վանք:

Ճանապարհին հանդարտանում ենք նորից «Ճաշարան Գուղարք»-ում, և ապա վտրելով Փամբակի և Շիրակի դաշտը, Լենինական քաղաքի միջով, երեկոյան ժամը 6-ին հասնում ենք Հառիճա վանք:

Հառիճա վանքը գտնվում է Արթիկի շրջանի Հառիճ գոտում: Հառիճը եղել է պատմական Հայաստանի հյուսիսային և նշանավոր բերդավաններից մեկը, իսկ վանքը՝ Հայաստանի հոգևոր խոշոր կենտրոններից և մշակույթի վառ օջախներից մեկը: Հառիճա վանքը բաղմն է Արագածի փեշերին, ձորի բարձր քարափի ափին, գեղատեսիլ վայրում: Հառիճա վանքը իր հովասուն կլիմայով, սառնորակ աղբյուրներով, ալպյան կանաչությամբ և երփներանգ անուշաբույր ծաղիկներով՝ հին օրերին եղել է Ամենայն Հայոց կաթողիկոսների սիրած ամառանոցային վայրերից մեկը:

Հառիճա վանքի նշանավոր հուշարձանների խումբը ըաղկանում է երկու գավիթ-ժամատանից, երկու մատուռից, վանականների խցիկներից, պարսպապատից և գերեզմանոցից:

Հառիճա վանքի ամենահին կառույցն է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, կառուցված մի ոմն Սարգիս Ճոնի կողմից, է դարտում: Կենտրոնաբնակ փոքրիկ եկեղեցի է դա, խաչաձև հատակագծով, ներսից վլոր, գլխավոր մուտքի արևմտյան կողմում փոքր լանգակատնով: Եկեղեցին կառուցված է սև ու կարմիր տուֆի մաքուր տաշված մեծ քարերով:

Հառիճա վանքի գլխավոր եկեղեցին է Ս. Աստվածածին եկեղեցին, որը կառուցել է Զաքարե սպասալարը 1201 թվականին: Սա ընդարձակածավալ մեծ կառույց է, բարձր ու լայնանիստ գմբեթով: Հատակագիծը արտաքուստ ուղիղ քառանկյունի է, իսկ ներսից՝ խաչաձև: Խորանները երկհարկանի են: Վերի հարկի խորանները սրահաձև, սյունազարդ և կամարակապ, իջխանների համար, և ուր բարձրանում էին 12 աստիճան ունեցող քարե սանդուղքներով: Ձեռքանների այսպիսի լուծումը եզակի դեպք է հայկա-

կան ճարտարապետության մեջ», ըստ մասնագետների:

«Տաճարի արևելյան ճակատի վերի մասում, պատի մեջ արուցված է Զաքարե և Լվանե եղբայրների ամբողջական, մեծադիր բարձրաքանդակը: Եկեղեցին կառուցված է վառ մանիշակագույն մաքուր հղկված խոշոր քարերով, ճակատների և գմբեթի թմբովի լուսամուտները պսակված են գոտկավոր շրջանակներով, գմբեթի վեղարը պարզարված է ծոպերով, իսկ քիվերը պատած են ծաղկահարու պարզաքանդակներով:

Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան կողմում, տաճարին կից, գտնվում է Գավիթը կամ ժամատունը, որը կառուցվել է ԺԳ դարի 50-ական թվականներին Վահրամ Հեճոսպ իջխանի կողմից, քառակուսի հատակագծով, ջորս հաստահողույս և ամբողջական ութ կեսասյունների վրա, թաղակալ ծածկով, կենտրոնում հատուկ քառակուսի անց-երգիկով: Գավիթը երեսապատված է կապտագույն քաղալտի արքատաշ խոշոր քարերով: Եկեղեցու հարավային կողմում գտնվում է երկրորդ գավիթը, ավերակ վիճակում:

Այցելում ենք նաև ձորի քարափի եզրին գտնվող մատուռը, միաբանության խցիկներից, կաթողիկոսական ամառանոցը՝ վանքի հյուսիս-արևմտյան կողմում, պարսպից ներս, բողբոլ էլ երեքհարկանի, շարված վարդագույն տուֆի տաշված քարերով: Առաջին հարկումն են մատանը, ամբարները, սեղանատունը, խոհանոցը, անասնաբոսերը:

Հառիճա վանքի բոլոր կառույցները պարսպապատված են: Արևելյան պարիսպը կառուցել է Զաքարե սպասալարը:

Վանքի գերեզմանատունը գտնվում է պարսպից դուրս, գլուղամիջում, բարձրադիր վայրում: Հառիճա վանքում հետաքրքիրն այն է, որ ոչ գավթում, ոչ բակում չկան դամբարաններ, ինչպիսիք վային Սանահնում և Հաղբատում:

Երկու ժամ մնացինք Հառիճա վանքում: Ժամը 8-ին կատարեցինք երեկոյան ժամերգություն: Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին լիքն էր պրտալի աղոթավորներով: Մեզ խորապես հոգեց Հառիճ գոտուացիների բարեպաշտությունն ու հյուրասեր ապանշականությունը: Նրանք մեզ հյուրասիրեցին առատորեն թարմ չավաշով, սարի մածնով և պանիրով, և մեզ ճանապարհեցին սիրով և տրախությամբ: Երեկոյան ժամը 9-ն էր, արևը մայր էր մտել, երբ մենք հրաժեշտ առանք Հառիճա վանքից, անմոռանալի հուշերով:

Նույն գիշեր ժամը 1-ին մեր խումբը հասավ Մայր Աթոռ, 700 կիրմետր ճանապարհ կտրելուց հետո:

Դեպի մեր պատմական վանքերը կատարված այս տվտաղնացությունը իր քաղցր ու սրտագին հուշերով և մեզ պատճառած իր հոգեկան խորունկ քավականությունը, ոչ միայն առհավիտ անմոռանալի է մնալու մեզնից յուրաքանչյուրի հիշողության մեջ, այլ նաև ընդմիշտ մեր սրտերը լցնելու է անհոմ

կրախտագիտությունը և շնորհակալությունը՝ դեպի մեր բոլորի սիրելի Հայրապետը, որը այս երջանիկ տվտաղնացության առիթը շնորհեց մեզ:

Վերադարձանք Մայր Աթոռ՝ հոգեկան նոր լիցք, նոր կենդանություն և շունչ առած մեր պատմական վանքերի դեղեցիկ հուշարձաններից և նրանց կամարների տակ ծրարված խորհուրդներից:

Ա. Հ.

